ՈՒՍՏԻԱՆ.– Դուք էլ մա՛րդ գտաք վախենալու: (Մահակը բարձրացնում է եւ հարձակւում Նազարի վրայ: Խփելով) Ա՛ռ քեռ՛փակ… (Նազարը փախչում է դուրս: Պալատականները շշմում են:)

ՄԻ ՊԱԼԱՏԱԿԱՆ.– Տեա՛րք, սա ի՞նչ է, վախեցա՛ւ…

ԵՐԿՐՈՐԴ ՊԱԼԱՏԱԿԱՆ.– Ինչպէ՞ս կարող է: Սրա մէջ մի խորհուրդ կա: Հիմի հրա՛շք կպատահի:

ՆԱԶԱՐ.– (Ներս վազելով՝ Ուստիանը հեռուից) Բէ՛, բէ՛, բէ՛, բէ՛:

ԵՐԿՐՈՐԴ ՊԱԼԱՏԱԿԱՆ.– Հիմի հրա՛շք կպատահի:

ՈՒՍՏԻԱՆ.– (Մահակը իջեցնելով գլխին) Թա՛ղեմ գլուխդ… Նազարը փախչում է աջ:

ՍԵՆԵԿԱՊԵՏ.– (Վազելով դէպի Ուստիանը) Համեստափայլ թագուհի…

ՆԱԶԱՐ.– Կայծե՛րդ կհանեմ… (Վազում է ձախ:)

ՍԵՆԵԿԱՊԵՏ.– (Վազելով դէպի Նազարը) Թագաւո՛ր քաջ…

ՈՒՍՏԻԱՆ.– (Վազելով նազարի հետեւից եւ մահակը խփելով:) Խո՛րեմ գլուխդ:

ՍԵՆԵԿԱՊԵՏ.– (Վազելով հետեւից) Համեստափա՛յլ թագուհի…

ՆԱԶԱՐ.– Կտո՛ր-կտո՛ր կանեմ… (Վազում մտնում է գահի տակ:)

ՍԵՆԵԿԱՊԵՏ.– (վազելով դէպի նա) Թագաւո՛ր քաջ…

ՊԱԼԱՏԱԿԱՆՆԵՐ ԵՒ ՍԱՔՈ.– (Շարժում են անում դէպի Ուստիանը, խնդրելու ձեւով: Ուստիանը մի հարուած է հասցնում Սաքոյի գլխին, մահակը շարժում է միւս պալատականների կողմը:)

ՍԱՔՈ.– Ա՛ման (Փախչում է դուրս: Պալատականները ետ են քաշւում:)

ՆԱԶԱՐ.– Տո հերիք չեղա՞ւ, ամոթ չունե՞ս…

ՈՒՍՏԻԱՆ.– Ամոթը ե՞ս պիտի ունենամ, թէ դու: Կրե՛մ գլուխդ… (Մահակը կոխում է գահի տակ եւ բոթում Նազարին:)

ՆԱԶԱՐ.– Բո՛, բո՛, բո՛… Տո՛, տո բռնէք դրան… Ուստիա՛ն…

ՈՒՍՏԻԱՆ.– (Գահը գլորելով մի կողմ) Դէ հիմի կաց, քեզ խալխի առաջ դնգստեմ, որ աշխարհք տեսնի քեզ…

ՄԻ ՊԱԼԱՏԱԿԱՆ.– Հիմա հրա՛շքը կպատահի…

ՆԱԶԱՐ.– (Դուրս է փախչում:) Ա՛ման… (Ուստիանը հետապնդում է:)

ՊԱԼԱՏԱԿԱՆՆԵՐ.– Տեսա՛ք հրաշքը…

Հանկարծ փոթկում է մի ընդհանուր քրքիջ, որ անզուսպ կերպով սկսում է ուժեղանալ եւ լցնել դահլիճը: Հսկաները ներս են թափւում եւ զարմացած նայում: Ամենից շատ ապշել է Ղոռոբուղան: